*Ուժի մեջ է մտնում 15.11.2022թ-ին*

<table>
<tr><th colspan="2">ԵՐԱՇԽԻՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ</th></tr>
<tr><td>Երաշխիքի արժույթ</td><td>ՀՀ դրամ, Ռուսական ռուբլի, ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ</td></tr>
<tr><td rowspan="2">Երաշխիքի տրամադրման վճար</td><td>1. Դրամական միջոցների դեպոնացմամբ՝<br>
<table>
<tr><td>Մինչև 90 օր</td><td>0.3% միանվագ*</td></tr>
<tr><td>91-180 օր</td><td>0.5% միանվագ*</td></tr>
<tr><td>181-270 օր</td><td>0.7% միանվագ*</td></tr>
<tr><td>271-365/366 օր</td><td>1% միանվագ*</td></tr>
<tr><td>366/367 օր և ավել</td><td>1% տարեկան*</td></tr>
</table>
*նվազագույնը 10,000</td></tr>
<tr><td>2. Այլ միջոցների գրավադրմամբ՝<br>Մինչև 3% միանվագ, նվազագույնը 10,000 ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>Ապահովման միջոց/Գրավի առարկա</td><td>✓ Դրամական միջոցներ<br>✓ Անշարժ գույք<br>✓ Ավտոմեքենա<br>✓ Երաշխավորություն (որպես լրացուցիչ ապահովվածություն)</td></tr>
<tr><td rowspan="2">Պարտավորության գումար/գրավի արժեք հարաբերակցությունը</td><td>70%</td></tr>
<tr><td>Դրամական միջոցներով ապահովված երաշխիքների դեպքում պարտավորության գումար/գրավի արժեք հարաբերակցությունը սահմանվում է 100%, եթե պարտավորության գումարն ու գրավի արժեքը նույն արժույթով են, իսկ տարբեր արժույթների դեպքում պարտավորության գումար/գրավի արժեք հարաբերակցությունը սահմանվում է առավելագույնը 90%:</td></tr>
<tr><td>Երաշխիքի ժամկետ</td><td>Մինչև 60 ամիս</td></tr>
<tr><td>Երաշխիքի պայմանների փոփոխություն</td><td>25,000 ՀՀ դրամ<br>Ժամկետի երկարաձգման կամ գումարի ավելացման դեպքում լրացուցիչ կգանձվի ավելացված ժամանակահատվածի/գումարի նկատմամբ հաշվարկված համապատասխան տրամադրման միջնորդավճար</td></tr>
<tr><td>Հաճախորդի հրահանգով երաշխիքի դադարեցում</td><td>25,000 ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>Վճարում պահանջի դիմաց</td><td>0.15%, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>Երաշխիքի հաստատում երրորդ բանկի կողմից</td><td>Ըստ պահանջի</td></tr>
</table>

## Ծանոթություն

1. Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունները և դրանց վճարներն են.

2.1. Անշարժ գույքի գրավադրման դեպքում.

- ✓ Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000-22,000 ՀՀ դրամ,

- ✓ Գրավի պետական գրանցման վճար՝ 26,000 ՀՀ դրամ,
- ✓ Նոտարական վավերացման վճար՝ 16,000-20,000 ՀՀ դրամ:

2. Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:
3. Այն դեպքում, երբ որպես գրավի առարկա առկա է նաև ավտոմեքենա, ապա Երաշխիքը տրամադրվում է Ավտոմեքենայի պարտադիր «Կասկո» (ֆիզիկական վնաս և առևանգում) ապահովագրությամբ՝ առնվազն երաշխիքի գումարի չափով, յուրաքանչյուր տարի, Երաշխիքի գործողության ողջ ընթացքում: Ընդ որում շահառու պետք է հանդիսանա Կազմակերպությունը:
4. Երաշխիքի դիմաց հաշվարկված սպասարկման վճարները գանձվում են ՀՀ դրամով՝ անկախ արժույթից:
5. Արտարժույթով երաշխիքների տոկոսների գանձման հիմք է հանդիսանում ՀՀ ԿԲ կողմից սահմանված տվյալ օրվա հաշվարկային փոխարժեքը:
6. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանվում է առանձին Հավելվածով (Հավելված 2 **APD#02 (FC1050PRC#08)**):
7. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո երաշխիքի հայտի վերաբերյալ որոշման կայացում, Պրինցիպալին տեղեկացում մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:
8. Երաշխիքի տրամադրում՝ պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում:
9. Ոչ ֆինանսական ծառայությունների սակագները, այդ թվում քաղվածքների, պայմանագրերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները հրապարակված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Կազմակերպության գործունեության վայրերում:
10. **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԵՐԱՇԽԻՔԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:**
11. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:**
12. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:**